

Օրինակ մագաղաթ Կոնդակի սուրբ Աղբրկայ վանից Մշոյ.
Օրինակեալ 1882 օգոստոս 30, ի նոյն վանս. [ի ծեռն
Գարեգին եպիսկոպոսի Սրուանձտեանց].

ՊԱՏՄՈՒԹԻԻՆ ԱՍՏՈՒԱԾՂՆԿԱԼ Ս. ՆՇԱՆԻՆ
Ս. ԱՂԲԵՐԿՈՒ.

Գոյացուցիչն ամենայն լինելութեանց, որ արար զերկինս և զերկիր, զմարդ և զանասուն, զբոյս և զառնակս, Աստուած է: Այլ և ժամուց և ժամանակաց ի դարս դարս և ի ժամանակս ժամանակս ըստ մարգարէին՝ Յարուցանէ զազքատս յերկրէ, և բարձր առնէ զառապեալս յազբեաց. նստուցանէ զթագաւորս յաթոռս, և ածէ գաւտի ընդ մէջ, և առաքէ զգաւրավարս ի գերութիւնս և գերելոցն և բանտարկելոց զազատութիւն շնորհէ, որպէս և մարգարէին աստուածաշայրն գրէ. [Թէ՛ Ոչ թողու Տէր զգաւազան մեղաւորաց ի վիճակս արդարոց, և արդարքն մի ձգեսցեն զձեռս իւրեանց ի յառնել զանիրաւութիւն, դարձեալ այլուր ասէ. Զի ոչ թէ իւրով զաւրութեամբ զաւրանայ հզաւրն, այլ Տէր տկար առնէ զհակառակորդն և Տէր սուրբ է: Եւ թէ՛ Մի պարծիք և մի խաւսիք զամբարտաւանս: Բազում են այսպիսի վկայութիւնք գրոց, բայց մեք ըստ աւուրս և ըստ պատահման ժամանակիս պատմեսցուք և մի մեծաբանեսցուք կարողութեամբն Աստուծոյ:

Ես Սմբատ Հայկազնի որդի Աշոտոյ, և թագուհիս Շահանգուխտ, որ Տիեզերակալ կոչեցայ և տիրեցի Հայոց մինչև յԱսորիս, և էր նա այր կորովի և առատամիտ և պատերազմող, և յաջողեցաւ նմա, և կապեաց նմա թագ Ասամանոս թագաւորն Յունաց, և սիրէր զնա յոյժ. և նա տիրեաց ամենայն աշխարհիս Հայոց և ընդ ձեռամբ էած զՀայք, զՏայք, զՎիրք, զԱղուանք և զՎրաց դաշտ, և զՓառիուն, և զԱշարնիս և զԱրևիս, և զԲաղայ, և զաւանն զՊարդայ առեալ տիրեաց զՓայտակարանն որ է Տփիսիս,

զԿորնբերդ, զԼամիս, և Վաղարշապատ, զԴուլին, և զՎայոց
 Զորն—զՆախշուանն էառ և զամրոցն Երնջակայ, և զՎա-
 զարշակերտ, և զՎաղարշաւան, և զԲասէն, և զԱպահու-
 նիս, զՀարք, և զՏարաւն, զՍասունք, զԿերան, զՊելախան
 զՇէրվան, և շինեաց զամրոցն Խլաթայ, շինեաց և զգա-
 ւառսն և զամենայն աշխարհն Առբերունեոյ¹⁾, Եւ առն
 մի տաճկի տայր իւր զբերգն Բերկրոյ, անուն նորա Ռա-
 ջապ, որ եկեալ էր ի Դարբանտ քաղաքէ առ արքայն
 Սմբատ, և Ծաղկէտոն գաւառն տաճկի մի այլ, և մե-
 ծամաեցաւ, և ինքն անուանեաց զինքն Տիեզերակալ Սմբատ:
 Յայնժամ քոյրն իւր Հրանոյշ յղեալ առ եղբայր իւր
 Սմբատ և ասէ. թէ իմ այրս Տէրէն թողեալ զիս և զայ-
 լազգի մի կու սիրէ, ՚ի Հերայ, զգուստր Ապամարտայ, և
 այնչափ յանդգնեալ է և յամառեալ յայլազգին, որ զհա-
 սարակ տարւոյն՝ գնայ անդ կենայ, և զամենայն բարիք
 տանս անդ տանի և պատրաստէ նոցա կերակուրս, այլ և
 զգանձս և հանդերձս, զծիս և զլորիս տանի կնոջն այ-
 լազգւոյ, և անամաչ լրբութեամբ սիրէ զնա, և զորդիքն
 իմ առ ոչինչ համարի և անտես առնէ, և դու Տիեզերա-
 կալ եղբայր, յորմէ սարսին ամենայն թագաւորք և իշ-
 խանք և մեծամեծք երկրի, մի տար զիս արհամարհել-
 քանզի քոյր քո եմ, և ոչ զայլ ոք ունիմ տէր:

Զայս իբրև լուաւ թագաւորն Սմբատ, յղեաց առ
 Տէրէն և ասէ, զի՛ առնես զայդ ապիրատութիւն զոր չէ
 պատեհ, զքոյրն իմ զՀրանոյշ զոր ոչ այգպիսի եղև ի
 կանայս համեստ և գեղեցիկ, դու զնա թողուս, և առ
 այլազգին երթաս. չերկնչիս յԱստուծոյ, և թէ վասն
 պոռնկութեան պէտս ունիս՝ բազում կանայք կան յաշ-
 խարհդ Վաստուրականի, այլ և լսել թէ զամենայն կա-
 նայք աղատաց քոց ապականեալ ես, երկիր յԱստուծոյ
 չէ քեզ բարի այդ ձայնդ զոր լսել եմ:

1) Հետադոտիչ բանասէրք այս տեղեաց անուններն պէտք
 է ի նկատ առնուն, և բաղդադէն այժմու անուանց հետ:
 Յ. ք. Մկրեան:

Իբրև լսեց Տէրէն զԹուղթն Սմբատայ, ասաց ընդ գետապանն. Աստ ընդ Սմբատ թէ՛ դու կարի անձնահաճել ես ընդ մեծութիւնդ՝ որ քեզ յաջողեցաւ. Դու ինչ ես որ զայդ ընդ իս ասես, իմ տանս տէր եմ և իմ կամացս, զոր սիրեմ զայն առնեմ, թէ չես հաճոյ, յղարկէ և տար զքո՞ քոյրն, թէ չէ ես յղարկեմ առ քեզ:

Յորժամ լուաւ զայս թագաւորն Սմբատ, գրեաց հրովարտակ ՚ի Հեր, առ որդիքն Ապամուրայ, և որդիքն Տէրէնի Գորգի և Գագիկ քուեր որդիք էին Սմբատայ թագաւորին, և սխացան ընդ քեռին իւրեանց, և այս մինչև ցայս վայր գրեցաւ. զբովանդակն գտանես ՚ի յԱսողնակը:

Ես Սմբատ թագաւոր տիրեցի Հայոց ի թվն. ԽԳ. (44=595)¹) և էաք ի մեծի խաղաղութեան, որ և ի յազգմանէ չարին, և ի նախանձու յոռի և աներկիւղ խրատուողաց ի մեծ իշխան Աղձնեայ, Գագիկ քուեր որդին իմ առնու ի թիկունս զղաւթն Իսմայէլի, զԽալիֆայն Պաղտատայ, և թագ կապէ իւր, և նստի ի յԱղթամար, և տիրապետէ Խլաթայ ծովուն հարաւակողմն ամենայն դաւառաւքն, որ Հայոց լեալ էին, և ջանիւ և աւգնականութեամբ նոցին կամէր և զչորրորդ Հայք առնուլ. զԱնձտայ (ղարս) զՍասունք, զԽոյթ, զՏարաւն, զՇատահն, զԳաւրհատն, զԽլաթ, զՄանաղկերտ, զՀայք, զԱրճէշ, զոր լուեալ մեր ի նախանձ վառեցաք որպէս արէն է թագաւորաց՝ ոչ կամելով զայլոց թագաւորել, ըստ այնմ թէ զփառս իմ այլում ոչ կամիմ. ժողով արարի բազում հեծելոց ՂԳ. (94) հազարաց, և եկաք ի յաշխարհն Ապահունիս կոչեցեալ, ուր և եկն ընդ մեզ՝ մեծ և փառաւոր Կաթուղիկոսն Հայոց Տէր Յօհաննէս երկուտասան եպիսկոպոսաւք միջնորդ և խաղարար երկուց կողմից մեզ և քուեր որդւոյն իմոյ Գագկայ:

Եւ միջնորդութեամբ Տէր Յօհաննէսին և այլ բազում եպիսկոպոսաց և քահանայից և կամաւորութեամբ Աս-

¹) Ննձ թուի թէ սխալ է այս թուական. Յ. ք. Մ:

տուծոյ Հաւր. և զաւրութեամբ սուրբ Հոգւոյն, և մարդասիրութեամբ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. յամալթեզ և սատանայ, և եկաք հաշտութեամբ առ իրարս և բարձաք զչարն ի միջոյ, և եկաք ի գեղաքաղաքն Մանազկերտ, և էաք ի մեծի ուրախութեան: Որ և Աստուծոյ հաճեալ ընդ միաբանութիւն և ընդ հաշտութիւն մեր. որ և այսաւր սքանչելի և զարմանալի հրաշք գործեցաւ ի քաղաքին Մանազկերտ. զի լուեալ էր մեր զյարութիւն պատանւոյն ՚ի Փրկչական Խաչէն, և երկբայութեամբ հաւատայաք, որպէս Թումաս ի յարութեան Տեառն. զի Սողոմոն Առակախաւս գրեալ է թէ՛ Զոր տեսցէ ակն քո, խաւսեսցի բերան քո:

Քանզի էր գաւառին Խութայ ի գլուխն՝ Անապատ մի նախադիր Առաքելոյն Թագէտսի ի նմա. կայր այլ և Խաչ մի ի չափ Վարադայ Խաչին, անուանի սուրբ Ազբայրիկ. զոր ի Յակոբայ Տեսուն եղբարէն տան աւրհնեալ, զոր և անունն յայտ առնէ, իսկ այլք՝ թէ՛ ի Փրկչական Խաչին մասն եղեալ ի նմա, զոր մեք զանցեալն ոչ գիտեմք պատմել, բայց զոր տեսաք աչաւք, ոչ կարեմք թագուցանել, և կրել վճիռ ի Տեառնէ՛ ըստ քանքարաթագուցացն:

Քանզի յորժամ՝ եկաք ի գեղաքաղաքս Մանազկերտ, եկն և Հայր Վանդրին Եղիշէ. ունելով ընդ ինքեան զՍ. Խաչն Ազբարիկ. և էր տուեալ պարգև սրբոյ Խաչին Սմբատ Մամիկոնց չորս կուղպակ, և երկու ակնեան Առատանոց մի որ Զիթահանք կոչի, ի ցետուաց դռան մուտն ի յաջակողմն որմակից Սրբոյն Սարգսի. և միւս եկեղեցին որ մեր աւրի սուրբ Աստուածածին կոչի մերձ ի դուռն ցետուաց:

Եւ էր հաւրն Եղիշէի սանահայր մի աւագերեց քաղաքիս, անուն նմա Բարիկ, և սանամաւրն Զոյի, և ունէին ի զաւրաց մերոց իջեանս. եկն և հայրն, և ի խնդութենէն զմիմեամբք խմբեցան, և էր հաւրն սանն՝ երկու երկու ամաց աւելի կամ պակաս, անկանի ի թոնիրն և այրի, և լինի որպէս գործելի: Եւ քաջահաւատ կինն ոչ յայտնեաց ումեք բայց միայն երիցուն հաւրն տղային, և

նա ևս ծածկեաց զեղեալ գործն յԱստուծոյ յուսարով պատեալ եգ յօրորոցն և խնդրեալ զսուրբ Խաչն՝ տարեալ ի վերայ տղային, զոր ածէր զմտաւ թէ՛ որ հաւատով խնդրէ առնու. զի ոչ տկարանայ առ ի յԱստուծոյ ամենայն բան. և խնդեանք սպասաւոր էին լրջմտութեամբ և պայծառ դիմօք. մինչև յարբումն հասեալ գինւոյն, և բառնալ ամալթոյ մարդկան. խնդրէ Եղիշէ և սանն, և երկիցս և երկցս պատճառեն թէ քուն է. և նա անյայտապաղ և ստէպ խնդրէր:

Ապա կարողութեամբն Յիսուսի Քրիստոսի, որ զՂազարոս չորեքօրեայ կոչեաց ի մեռելոց, շրջեալ տղային զօրորոցն և ընկէց զխաչն ի գետին, և սկսաւ լայ շառագունեալ և քրտնեալ երեսաւք, որպէս ի բաղանեաց ելեալ: Յայնժամ հայրն և մայրն զճիշ և զազազակ բարձեալ ի լուր ամենեցուն թէ մեք զտղայդ խոշտեալ գործելի եղաք յաւրորոցն, զայս լուեալ ամենեցուն առ հասարակ քաղաքն ամենայն և հեծելագարն գիմեալ ի տունն տեսին զմեծահրաշ սքանչելիսն, զի մազ մի ի գլխոյն ոչ էր կիզեալ, և զենմունք և ծախք բազում եղեն ի քաղաքիս և յերկրիս. և հաւատ և նոր հաստատեցաւ ի մեզ և զառաջին յարութիւնն պատանւոյն՝ վերջնովս հաւատալի եղև:

Եկաք և մեք Սմբատ թագաւոր Հայոց և թագուհին իմ Շահանգուխտ, և նոր թագաւոր Գագիկ քուերորդիս իմ, և Թամար թագուհին, և բազում իշխանք և ազատք. Վասակ Սիւնեաց տէր, Զվանշէր տէր Կապանին, Վարազ Մարդպետական. Գնուն Գուգարաց, Վասակ Բջնոյ, Ասպետ Ապակաստանի, Արտաշիւր Բագրատունի, Սարգիս Խոռխոռունի, Աշոտ իշխան, և այլք բազումք յիշխանաց Հայոց և յազատաց. այլև Ուսուֆն ի զաւրացն Պարսից դեսպանի, և սիրոյ ազազաւ եկեալ էր առ մեզ՝ միահամուռ եկեալ ի տեսութիւն տղային. և տեսաք նոր սքանչելիք, զի մազ մի ի գլխոյն ոչ էր պակասեալ: Եւ երէցն ոչ սակաւ ծախուորեցաւ, զի ունէր ինչս բազումս, զոր կերակրելով և զոր մեզ տանմտելի՝ տալով, զի պայազատ

1) Տանմտելի, ահա նոր բառ, յորմէ կը գուշակուի, թէ

ազգէ էր երէցն. նաև Խաչին բազում ուճիկս խոստացաւ, և տունն ամենայն սք ըստ կարողութեան իւրոյ:

Եւ մեք թագաւորքս և Կաթուղիկոսն խորհեցաք զքաղաքս երկրով Խաչին ողբ տալ ամենայն մտաք՝ զոր թագաւորքն պահանջեն: Յետոյ ի միտս եղեալ մեր վասն դեսպանին որ առ մեզ էր, և վասն Պարսկց որ ուշ եղեալ էին գալ ի վերայ մեր, ոչ տեսաք պատեհ, այլ բաւանդակ համարեցաք զտուեալ պարգևքն ի Սմբատայ Մամիկոնեանցն՝ անսղալ և մնացական:

Եւ մեք Կաթուղիկոս թագաւորքս տուաք զքաղաքս երկրովն վիճակ Խաչին և Վանդրին, և սահմանեցաք զեղիշէ Հայրն Եպիսկոպոս Վանդրին, և կարգեցաք ընդ դահագլուխ Եպիսկոպոսն, զի և առաջին Եպիսկոպոս հարք, այն է առաջին յաջոյ կողմանէն յետ սրբոյն Գրիգորի: Վասն որոյ որ տեսաք մեծ սքանչելիս, և վասն որ՝ Վանդիրն Սենեքերիմանցն տապանատուն էր, և ունէին զՍասունք իւրեանց վիճակ և զԿայթ գաւառ, վասն այսորիկ ինքնագլուխ արարաք զՎանդրին Եպիսկոպոսն. բայց Մեռոն ի յԱթուոյս առնու: Եւ տուաք զՄանազկերտ կարգեալ Եպիսկոպոսոքն Վանդրին, զի Մանազկերտայ Եպիսկոպոսն տէր է ՚ի Լծայ մինչ ի յազադուռն աւրնայ երկրովն, Բակոց մինչև յԱրժկաշու խուռն՝ ուր ջուր թափի մին այլ Կապարն Տարապաճուկն Սյծաբերդին երկրովն, Պաւլխուխովն. բայց Սագրանոյ Եպիսկոպոս կայ՝ զնա այլ ի հնազանդութիւն տուաք Վանդրին, և զՍղէրտ և զԲաղէշ իւր երկրովն մինչև ի Բէլաւ, և միւս այլ՝ զԼժկան և զՍնթկան և զմիւս այլ զԿոթ ձորոյն և զՈղորմականն և զԽոյթ, որ իւրեանց կարգած էր ցառաջն՝ տուաք Խաչին և Եկեղեցւոյն ձիթագին՝ որ Եկեղեցականն ժողովէ: Եւ զՍասունն որ իւրեանցն էր, տուաք Ղազարու վանացն, զատ ի թաղասայ գաւառէն, զի Վանդիրն ի Սասնոյ հաշիւն է, և գաւառն մինչև ի Կեցիր արաք, և յԸւրդիրն

Երբ թագաւորն մէկէ մը տուն մանէր դրամ կը վճարէր . . . :

Յ. ք. Մ.

և զՀօրսանք գաւառն մինչև յԵզնքարն. և զԱրծուեաց գաւառն իւր սինօրովն. զի Հայրն որ եպիսկոպոս օրհնեցաք Արհաւից էր:

Վասնորոյ մեք կաթուղիկոս և թագաւորքս պատեհ տեսաք և սահմանեցաք, զի մի որ ի մերոց կամ՝ յաւտարաց իշխեսցէ խափանել, և թէ ջանայ խափանել, մասնակից լիցի Յուդայի և խաչահանուացն: Եւ կաթուղիկոս որ խափանէ նախանձու աղաքաւ կամ՝ կաշառաց, նղովեալ եղիցի յերկց սուրբ ժողովոց, առաջին՝ երեք հարիւր տասն և ութիցն. և երկրորդն՝ երկու հարիւրիցն և երրորդն ի Կ. Պաւլսին. որ յԱթոռ Հայրապետութեան մի մնացէ, որպէս զԱրիոս, զՆեստոր, զՄակեդոն և զայլ հերձուածողան:

Եւ թէ թագաւոր՝ որպէս զՓարաւօն անդնդատոյզ եղիցի, և ելցէ զնա երկիր որպէս զԿորխ և զԴադան և զԱրիւրոն: Եւ թէ քահանայն նախանձու աղաքաւ խափանեալ ջանայ, ի քահանայութենէ լուծցի, և ընդ Աննայի և Կայիափայ ընկալցի մասն. և հող աւրհնութեան զնա մի ծածկեսցէ, և յետոյ թոշակին մի արժանասցի:

Եւ թէ աշխարհական որ յանդգնի նախանձու կամ՝ այլ իրիք պատճառի և հանել ջանայ, Հաղորդի արժանի մի լիցի, և աւրինաւոր թաղումն նմա մի առնիցեն:

Արձան յաւիտենական եղիցի մինչև գայ Քրիստոս:

Եւ թէ հանգիպի որ յետ մեր Մուսուլման Սուլթան գայ և նստի և խափանել ջանայ Ուսուֆի Ապասէճայ որդւոյն բանիւ դրեցաք զայս. նա՝ իւր Մահմէտէն և յԱշայէն և Փայտայէն ապիղար լինի, ու զինչ հալալ ունի ի վերայ ուրեան մասան ասէ տալաղովն ուր կին թողած լինի մինչև ի Պաղտատ, մինչև ի հարիւր հազար ջհտի նալաթ լինի:

Գրեալ եղև գիրս ի թվիս Հայոց չորս հարիւր ԽԳ՝)

1) Այս տեղ ուղղեցաւ թուականն, զի յայտնի կը տեսնուի որ գրութեանս մէջ ի վեր անգը թուականէն Ն գրքը մոռցուէր է և միայն ԽԳ թիւը գրեր է:

(444=995) և տաճիկ թարիխն՝ երեք հարիւր ութսուն չորս, ի յամսեանն նոյեմբերի ը (8) որ էր տան սրբոց Հրեշտակապետացն:

Զայսչափս մեք պարգևեցաք. և զոր յառաջն ունէին ի ս. Գրիգոր Լուսաւորչէն մերոյ և յայլ թագաւորաց և յասպարապետաց, զԳրեկաւ երկիրն, մինչ ի Յարգգողն, Բողնարդու երկիրն, զՏէրզնի. Պըֆրայ, Պապերս, զորս այլ ինչ առաջ ունէին Վանդէրն, տուած իւրեանց ի Մամիկոնեանց ասպարապետաց ի Տարոն առ ավին Մեղուայ զգեղն Մակոանգոմ՝ կոչեցեալ բոյոր սահմանաւն, Թլաւն, և Հարսնգոմով, և Արագիլ բունովն, և գետաւն Մեղուայ, և ի դաւառն Թաղանայ. զԱրծուամարգ և զԶորենթաք, և ջաղացքն առ ստորտով մաւտ ի գետն զայսոց Սելիկն տեսաք, և մեք տուաք իւրեանց հայրենիք. զգեղն Ռոստոմաչէն ի Մանաղկերտ մաւտ ի գիւղն Կոփ, ուր սուրբ Դանիէլի կեցոյցք էր, գետոյն արևելից կողմն անջրգի մզրայոյն որ գոմդիր էր Ռոստոմաչինի, Կոպար գետն որ ի մէջ Կողբայ և մինչ այլ մեծ ճանապարհ որ ի Մանաղկերտ երթայ: Եւ արևելից սահման ճանապարհն՝ որ աւագ գետն կերթայ և սոլաքնաց, անխափան մնացէ յաւիտեանս յաւիտենից:

Եւ մեք Սմբատ թագաւոր և Գագիկ թագաւոր, և Տէր Յոհաննէս Կաթուղիկոս Հայոց, յորժամ զՄանաղկերտ ի Վանդէր տուաք, ԽԴ. (44) Կաթուղիկոս անցեալ էր մինչ առ մեզ:

Ես Սմբատ թագաւոր և Գագիկ թագաւոր և Տէր Յոհաննէս Կաթուղիկոս Հայոց հանուրց, պարտիմք և զգահակալ Աթոռսն և յայտ առնել զիւրաքանչիւր գահ:

Նախ և առաջին՝ Հարք, այն է յաջոյ թուին յետ Սրբոյն Գրիգորի. Բ. Ոստանին. Գ. Մուրդապետ. Դ. Տալոյն է. Ե. Ռշտունեաց. Զ. Սիւնեաց. Է. Արծրունեաց. Ը. Մոկանցն. Թ. Ապահունեաց՝ որ այժմ Մանաղկերտ կոչի. Ժ. Բասենոյն. ԺԱ. Մամիկոնեանց. ԺԲ. Բագրևանդայ. ԺԳ. Բղնունեաց. ԺԴ. Խոռխոռունեաց. ԺԵ. Բղշխունեանց. ԺԶ. Վանանդայ. ԺԷ. Արշարունեաց. ԺԸ. Գնու-

նեաց. ԺԹ. Գողթան. Ի. Գարգմանայ. ԻԱ. Եւմիակէոյ.
 ԻԲ. Բզնունեաց. ԻԳ. Երստակայ. ԻԴ. Աստոցն. ԻԵ. Ան-
 ձեւեաց. ԻԶ. Պալունեաց. ԻԷ. Միւս ասորոց. ԻԸ. Մե-
 հունեաց. ԻԹ. Զարեփանայ. Լ. Միւս Աստոց. ԼԱ. Միւս
 ասորոց:

Այս է Գահակալ Աթոռին և Արքեպիսկոպոսըն ԼԲ.
 (32) զորս կարգեաց Ս. Գրիգոր երեք հարիւր քսան և
 չորս եպիսկոպոսըն. այսոքիկ ընդ Արքեպիսկոպոսաց ձե-
 ուամբն կային, և Միւսոն ի յԱրքեպիսկոպոսացն առնուին,
 և զոր մեռանէին իւրաքանչիւր շինակի Գահագլուխն որ
 նոր աւրհնէր եպիսկոպոս և զտեղն ընոյր: Եւ Գահա-
 գլուխըն զկաթուղիկոսն տեսանէին և Միւսոն առնուին
 և բաշխէին հնազանդելոցն եպիսկոպոսաց:

Եւ թագաւորեաց Սմբատ ամս ԾԲ. (52), և նահա-
 տակեցաւ ի Գլին ի Պարսից կամակցութեամբ Գագկայ
 քուերորդւոյն իւրոյ ի թվ. Հայոց Գ. ձ. 2. (Այսպէս յօ-
 բինակին)¹⁾:

— Ի թվ. Հայոց ԾԾԳ. (553=1104), նորոգեցաւ Կոն-
 դակս, զոր հինգ հարիւր ինն տարուայ գրեալ էր. և ես
 Գրիգոր Աղթամարցի, շինեցի զմագաղաթս և վերստին
 նորոգեցի ի ինդրոյ մեծ և փառաւոր, հեղ և բարի Առաջ-
 նորդացս, Տէր Յօհ. Արքեպիսկոպոս և Տէր Մխիթար
 հէրպետիս. զոր Աստուած անփորձ կենաւք պահէ զոսս
 և զբարեմիտ կրաւնաւորքս մինչև ի խորին ձերութիւն.
 Ամէն²⁾:

Ի հաւաքածոյց Տ. Յովն. ա. Բահանայ
 Մկրեանի գիսկականէն ընդօրինակեալ
 իւրով ձեռամբ:

1) Յայանի է ի Պատմութենէ՝ թէ Սմբատ Խոստովանող
 նահատակեցաւ ի Հայ թուականի ՅԳ. (304), որ կը համեմատի
 Քրիստոսի 855 թուին, ուստի մեզ անհասկանալի է վերոգրեալ
 թուականը. Յ. ք. Մկրեան:

2) Ծ. Խ. ուղղագրութիւնը պահում ենք ընագրի հարա-
 զատ մնալով: